2/26.4/5538

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«16» 04 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0076-21

Ձեռնարկողը՝ ***«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ***

ք. Երևան, Աբովյան 29

Գործունեությունը՝ ***Ռաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

Լոռու մարզ, ք. Վանաձոր, Չուխաջյան փողոց 24/1

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0076-21
<16> 04 2021թ.

Լոռու մարզի Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, ք. Վանաձոր, Զուխաջյան փողոց 24/1

Ներածական մաս. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոցը գտնվում է Վանաձոր քաղաքի արևելյան մասում: Դպրոցի տարածքն ունի պարզ երկրաչափական հորինվածք և բաղկացած է տարրական և միջին ուսումնական մասնաշենքերից, սպորտային և հանդիսությունների դահլիճներից, ինչպես նաև ադմինիստրատիվ հատվածից: Դպրոցն ապահովված է կադաստրային փաստաթղթերով, հողատարածքը սահմանազատված է: Դպրոցի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 8000 ք.մ : Դպրոցի նոր կառուցվող մասնաշենքերի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 3520 մ2: Նոր դպրոցը նախատեսված է 432 աշակերտների համար և բաղկացած է լինելու իրարից սեյսմիկ կարաններով անջատված 8 մասնաշենքերից: Կանաչապատման մակերեսը՝ 1485 ք.մ.:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի ա. ենթակետի՝ Լոռու մարզի Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոցի կառուցումը որպես քաղաքաշինության բնագավառի գործունեություն դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նոր կառուցվող դպրոցի մասնաշենքերի կոնստրուկտիվ սխեման ընտրվել է սեյսմակայուն շինարարության գործող նորմերի և կանոնների համաձայն: Նախատեսվող դպրոցական համալիրն ունի ծավալահատակագծային բարդ կառուցվածք և բաղկացած է միմյանցից սեյսմիկ կարաններով բաժանված ութ մասնաշենքերից (A, B, C, D, E, F, G, H մասնաշենքեր): Բոլոր մասնաշենքերը միասին կազմում են ամբողջական համալիր, իսկ առանձնացված սեյսմիկ կարանները հնարավորություն են ընձեռնում ապահովել մասնաշենքերի սեյսմակայունությունը: Դպրոցի կառույցների կրող համակարգերը միաձույլ երկաթբետոնե կոնստրուկցիաներով է: Բոլոր կրող կոնստրուկցիաներում նախատեսվում է օգտագործել ծանր լցանյութերով բետոն: Հիմքի նախապատրաստական շերտն իրականացվելու է B12.5 դասի ծանր բետոնից՝ 10 սմ հաստությամբ: Տանիքը կանգնատիպ է

արտաքին ջրահեռացմամբ և ջերմամեկուսացմամբ, նախատեսված է նաև շենքի ջրհորդանների հակասառեցման համակարգ:

Դպրոցի մասնաշենքերից B և G-ն երկհարկանի են և ծառայելու են տարրական և միջին դպրոցների համար՝ ներառելով դասասենյակները, բուժկետը, ուսուցչանոցները, սանհանգույցները: Մյուս 6 մասնաշենքերը՝ A, C, D, E, F, H, նախագծված են որպես միահարկ կառույցներ, որտեղ տեղակայված են լինելու ճաշարանը, սպորտային և հանդիսությունների դահլիճները, գրադարանը, հանդերձարանները, ցնցուղարանները, ադմինիստրատիվ և սպասարկամն սենյակները և այլն:

Նախագծային լուծումներում հատուկ ուշադրություն է դարձվել մի շարք կարևոր հարցերին՝ տարրական և միջին դպրոցի մասնաշենքերում հաշմանդամություն ունեցող երեխաների և սակավաշարժ այլ խմբերի համար հարմարեցված սանհանգույցների, վերելակների և թեքահարթակների առկայությանը: Դա կապահովի, որպեսզի դպրոցի բոլոր ենթակառուցվածքները մատչելի և հասանելի լինեն հենաշարժական խնդիրներ ունեցող ցանկացած անձի համար:

Դպրոցական համալիրի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հրդեհային հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով:

Նախատեսված է տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի դպրոցի ներքին և արտաքին հսկողությունը, հրդեհային ազդանշանման ավտոմատ համակարգ, ինչպես նաև համակարգչային ցանց, զանգային և ժամավորման ցանցեր:

Դպրոցը ներկայումս գործող է, հետևապես ապահովված է էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերով և այլ ենթակառուցվածքներով: Ինժեներական կոմունիկացիաների նախագծերը և սխեմաները նոր կառուցվող դպրոցի համար սկզբունքորեն մնացել են անփոփոխ:

Դպրոցի կառուցման հողային աշխատանքների դեպքում ընդհանուր հանույթը կազմում է 12576.25մ3, որից լիցքի նպատակով նախատեսվում է օգտագործել 1767.1մ3, իսկ ետլիցքի նպատակով՝ 7962.7մ3:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 26 ամիս , որից 4 ամիսը նախատեսված է գոյություն ունեցող մասնաշենքերի ապամոնտաժման աշխատանքերի համար:

Ջրամատակարարումը իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի, նախատեսվում է դպրոցի տարածքով անցնող d=150մմ տրամագծի ջրագծի շրջանցում դպրոցի տարածքից դուրս: Շրջանցվող ջրագիծը նախատեսվում է իրականացնել de160մմ պոլիէթիլենե խողովակներից, որի երկարությունը կազմում է 110 մ: Դպրոցի ջրամատակարարման արտաքին համակարգը նախատեսվում է իրականացնել de90մմ պոլիէթիլենե խողովակներից՝ միանալով շրջանցվող ջրագծից:

Հաշվի առնելով, որ ջրի ճնշումը չի ապահովում դպրոցի հաշվարկային տվյալները, նախագծով նախատեսվում է տեղադրել ստորգետնյա պոմպակայան: Պոմպակայանից դեպի դպրոց ջրագիծը նախատեսվում է իրականացնել d=80մմ պողպատե խողովակներից: Ջրագծի ընդհանուր երկարությունը կազմում է 62.0 մ:

Ջրահեռացումը իրականացվելու է համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի, նախատեսվում է դպրոցի տարածքով անցնող d=200մմ տրամագծի կոյուղագծի շրջանցում դպրոցի տարածքից դուրս: Շրջանցվող կոյուղագիծը նախատեսվում է իրականացնել Φ200մմ և Φ300մմ տրամագծի պոլիէթիլենե ծալքավոր խողովակներով, լայնվածքով: Շրջանցվող կոյուղագծի ընդհանուր երկարությունը կազմում է 206.0 մ
Նախատեսվում է կառուցել նաև 7 հատ դիտահորեր:

Դպրոցի արտաքին տարածքում նախատեսված են հակահրդեհային դիտահորեր՝ հիդրանտներով, համաձայն գործող նորմերի, որոնք նախատեսված են արտաքին

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

հրդեհաշիջման համար: Ներքին հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը, համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմների, կազմում է 2x2.5լ/վ: Ներքին հրդեհաշիջման կանգնակների վրա նախատեսված են հրդեհային ծորակներ:

Դպրոցական համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվել է շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Դպրոցի գազամատարարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող գազատարից, որն ապահովում է ներկայումս գոյություն ունեցող դպրոցի կարիքները:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական աշխատանքների իրականացումը բաժանված է երկու փուլի: Առաջին փուլը նախապատրաստական շրջանն է, իսկ երկրորդ փուլում իրականացվում են հիմնական աշխատանքները:

Հիմնական աշխատանքերն իրենց հերթին բաղկացած են.

1. ներկայումս գոյություն ունեցող դպրոցի մասնաշենքերի ապամոնտաժման աշխատանքներից,

2.նախատեսվող նոր դպրոցի մասնաշենքերի շինարարական աշխատանքերից:

Շրջակա միջավայրի պահպանություն, մասնավորապես փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա դպրոցի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի Վանաձորի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայրում:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն Վանաձորի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Վանաձորի քաղաքապետարանի համաձայնեցմանը,
- նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Վանաձորի քաղաքապետարանի հետ,
- կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին

Դպրոցի կառուցման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ:
2. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:
3. Աղմուկի, թրթռումների և տատանումների մշտադիտարկումներ:
4. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:
5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել մոտ 22000000 դրամ:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Լոռու մարզի, Վանաձորի քաղաքապետարանում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Լոռու մարզպետարանից» ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Դպրոցի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված

«Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

-շինհրապարակի արտաքին տարածքի սահմանազատում ժամանակավոր ցանկապատով, լուսավորությունով,

- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,

- կանխարգելել շինհրապարակից հոսքաջրերի հեռացումը շրջակա տարածքներ,

- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վանաձորի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Վանաձորի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

6. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Լոռու մարզի Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Հակոբյան

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՈՒ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
RA YEREVAN
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS